

Գայանե Այվազյան

ԵՐԵՄԻԱ ՉԵԼԵՊԻ ՔՅՈՍՈՒՐՃՅԱՆԻ ԿՅԱՆՔԸ

Երեմիա Քյոմուրճյան, Եղիազար Այնթապցի, Մարտիրոս Ղրիմեցի, Կոմիտաս Քյոմուրճյան, XVII դար, Կոստանդնուպոլիս, պատմագրություն, չելեպի

Երեմիա Քյոմուրճյանի կենսագրությունը շատ անգամ է գրավել ուսումնասիրողների ուշադրությունը: Եղած տեղեկությունները հիմնականում հանրագիտարանային բնույթի են, սեղմ և խիստ մասնակի¹: Նրա կենսագրության գլխավոր սկզբնաղբյուրը հենց ինքն է. իր աշխատասիրություններում տարբեր առիթներով նա հայտնում է ինքնակենսագրական տվյալներ, որոնք հիշեցնում են բեկորներ, որ ամբողջական խճանկար են դառնում իրար համադրելուց և ի մի բերելուց հետո միայն: Այս հիմքի վրա Քյոմուրճյանի կենսագրությունը առավել հանգամանալի քննության են առել Ն. Ակինյանը², Վ. Թորգոմյանը³, Մ. Նշանյանը⁴, Յ. Սահակյանը⁵, Ժ. Ավետիսյանը⁶, Գ. Բամպուրճյանը⁷: Ուստի դժվար է այս դեպքում գերծ մնալ Երեմիայի կենսագիրներին կրկնելուց: Արդ, կփորձենք արդեն հայտնի տվյալների համահավաք ներկայացմանը ավելացնել տեղեկություններ, որոնք կամ վրիպել են ուսումնասիրողների ուշադրությունից, կամ հայտնի չեն եղել:

¹ Ե. Դուրեան, Պատմություն հայ մատենագրության, Կ. Պոլիս, 1885, էջ 86: Ընդարձակ օրացոյց Ազգային հիւանդանոցի, Կոստանդնուպոլիս, 1901, էջ 113: Յ. Սրմբեան, Հայ մեծատունները, «Բազմավեպ», թիւ 3, Վենետիկ-Սուրբ Ղազար, 1901, էջ 118: Ա. Չամինյան, Հայ գրականության պատմություն, Ա մաս, Նոր Նախիջեւան, 1914, էջ 240-241: Գ. Գալեմքեարեան, Կենսագրություններ երկու հայ պատրիարքներու եւ տասն եպիսկոպոսներու, Վիեննա, 1915, էջ 70-78: Թ. Ազատեան, Ակն եւ ակնցիք, Իսթանպուլ, 1943, էջ 82-83: Մ. Ճանաչեան, Պատմություն արդի հայ գրականության. հատոր Ա, Վենետիկ Ս. Ղազար, 1953, էջ 7-8: Լեո, Հայոց պատմություն, Երկերի ժողովածու, հ. III, գիրք I, Երևան, 1964, էջ 357-362: Հովհաննիսյան Պ., Քյոմուրճյան Երեմիա Մարտիրոսի, ՀՍՀ, հ. 12, Երևան, 1986, էջ 464: Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը (XVI-XVII դդ.), հատոր երկրորդ, աշխատասիրությամբ՝ Յ. Սահակյանի, Երևան, 1987, էջ 760: Մ. արք. Օրմանեան, Ազգապատում, հատ. Բ, Ս. Էջմիածին, 2001, էջ 3091-3092:

² Ն. Ակինեան, Երեմիա Չելեպի Քեօմիւրճեան. կեանքն եւ գրական գործունեութիւն, Վիեննա, 1933, էջ 14-73: Հմմտ. նույնը, «Հանդես ամսօրեայ», 1932, թիւ 7-9, էջ 510-536, թիւ 10-12, էջ 624-677; 1933, թիւ 1-2, էջ 94-114:

³ Վ. Թորգոմեան, Նոր միւթեր Երեմիա Չելեպի Քեօմիւրճեանի կենսագրութեան համար, «Հանդես ամսօրեայ», 1930, թիւ 11-12, էջ 661-685:

⁴ Մ. արք. Նշանեան, Ներածութիւն, տես Օրագրութիւն Երեմիա Չելեպի Քեօմիւրճեանի (այսուհետև՝ Օրագրութիւն), Երուսաղէմ, 1939, էջ Է-ԾԸ:

⁵ Յ. Սահակյան, Երեմիա Քյոմուրճյան, Երևան, 1964, էջ 9-40:

⁶ Ժ. Ավետիսյան, Երեմիա Քյոմուրճյանը և նրա «Պատմություն համառօտ» աշխատությունը տես Երեմիա Քեօմիւրճեան, Պատմութիւն համառօտ ԴԾ տարւոյ օսմանցոց թագաւորացն, Երևան, 1982, էջ 5-17 (այսուհետև՝ Երեմիա Քեօմիւրճեան, Պատմութիւն համառօտ):

⁷ Պատմութիւն հրակիզման Կոստանդնուպոլսոյ, հրատ.՝ Գ. Բամպուրճեան, Ստանպուլ, 1991, էջ 15-27:

Երեմիա Քյոնուրճյանը ծնվել է 1637 թ.1 մայիսի 13/22-ին Կ. Պոլսում: Հայագի-տությունը սխալմամբ Երեմիայի ծննդյան թվականը համարել է 1635-ը: Հետագայում այս տեսակետը հերքվել է. 1637 թ. օգոստին ամառադարձ հիմնական փաստարկի օգտին է խոսում Երեմիա Քյոնուրճյանի «Տարեգրական պատմութիւն» երկից մի վկայություն, որ վերաբերում է 1645 թ. Ս. Նիկողայոս եկեղեցու հրդեհի նկարագրությանը, երբ Երեմիան նոր էր բոլորել ութնամյակը. «Եւ յորժամ շրջեցուցանէին զիս պապն իմ և հայրն իմ զձեռանէ կալեալ ի դիտելն իմ զաղէտ տեսրց խանութից և տանց ի խորել և ի բրել և յիստակել զայրեցեալ նիւթս և զերկաթս առ ի տարորոշել և ձեռք զմիջօք հառաչմամբ չկարէին մխիթարիլ առ ի մխիթարութեան բանս ծնօղաց մերոց: Թաքնաբար ընդ նոցին հեղեղացն արտասուաց և ես լայի զի յամն Ըբորոդ նոր էի մտել (ընդգծումը-Գ.Ա.)»: Համաձայն հեղինակի մեկ այլ վկայության. «[1656] Օրս զԺԹ տարին լցի եւ ի Ի տարին մտայ (ընդգծումը – Գ.Ա.)»²: Այսպիսով, կասկած չկա, որ Երեմիա Քյոնուրճյանի ծննդյան տարեթիվը 1637-ն է: Պատկերը հստակ չէ Երեմիայի ծագումնաբանության հարցում. իր՝ «Գանձ եւ ողբ ի վերայ հօրն ասացեալ» ստեղծագործության մեջ Քյոնուրճյանը հայտնում է, որ իր նախնիները «Արևելքից» շարժվում են «Արևմուտք»՝ Բարձր Հայքի Դարանաղյաց գավառի Խոճայից գյուղը, այնտեղից՝ Գալիպոլի, ապա տրամաբանորեն՝ Կ. Պոլիս³: Հետագայում Քյոնուրճյանը երբեմն իրեն անվանում է «Դարանաղեցի»⁴: Քյոնուրճյան գերդաստանի՝ Դարանաղիից եկած լինելու մասին վկայում է նաև 1640 թ. Կ. Պոլսում գրի առնված Հայսմավուրքի հիշատակարանը. «...ՁԿամախայ երկրէն ի գեղջէն Ապուշտայ զտէր Մարտիրոս քահանայն»⁵: Ժ. Ավետիսյանը, հիմք ընդունելով թուրք ճանապարհորդ Էվլիա Չելեպիի՝ Կամախի

¹ Աջարիան Վրաստանին միավորելու 135-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովին մեր ներկայացրած զեկուցման մեջ Երեմիա Քյոնուրճյանի ծննդյան թվական է արձանագրվել 1636-ը, ինչը անուշադրության հետևանք է և չի արտահայտում մեր տեսակետը (տե՛ս . . . , -

, South-West Georgia (history, archaeology, ethnology) conference materials, Tbilisi, 2013, p. 75):

² Օրագրութիւն, էջ 173-174:

³ «Նախ յԱրեւելից, ի պապանց տոհմից, գան յԱրեւմտիս. Ի Դարանաղիս, բնակեալք ի շինիս, անուամբ Խօճայից: Անդ յորդոց յորդիս, զարն եւ զաւակից, ըստ ժամանակից. Յետոյ ճէլալից, նեղութեանց վշտից, չուեալ հայրն անտից, Գայ ի կողմանիս, ի Կելիպօլիս, տեսեալ զԾնունդ արուիս: Մինչ նոր հանգստիւ, նոր օթեամից, տրոհեալ եւ յաստից», Յաւելուած, էջ 623-624:

⁴ «Յուսով այն կապեալ ծառայս Յիսուսի, Երեմիաս կոչեալ Դարանաղեցի, Նախնեաց պանդխտեալ արդ Բիւզանդեցի, Ի խնդրոց բազմաց զայս շարադրեցի, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հատոր երրորդ, կազմեց՝ Ն. եպս. Պողարեան, Երուսաղէմ, 1968, էջ 4:

Մեկ այլ տեղ՝ «Երեմիաս Բիւզանդեցի, որ նախնիքդ էր արեւելցի, Ջրկեալք իւրեանց հայրենեաց, կոչեցան Դարանաղեցի...»

Իջեալ ՚ի պանդուխտ վայրի, յունաց տանս ՚ի Տաճկաստանի», Պատմութիւն հրակիզման Կոստանդնուպօլսոյ, էջ 104:

⁵ Ն. Ակինեան, Երեմիա Չելեպի Քեօմիւրճեան, էջ 15:

բերդի մերձակայքում գտնվող Քյոնուր գյուղի մասին վկայությունը, հավանական է համարում, որ այն գտնվել է վկայված Ապուշտա կամ Խոճայից գյուղերի մոտ, որից էլ Քյոնուրճյանները ստացել են իրենց ազգանունը: Առաջադրված մեկ այլ վարկածի համաձայն՝ Քյոնուրճյան ազգանվան ծագումը արհեստագործական հիմքեր ունի, կապվում է ածխագործության հետ (թրք. kömürçü-ածխագործ բառից, ունի նաև ածխավաճառ իմաստը): Պահպանվել է Քյոնուրճյան գերդաստանի տոհմածառը, համաձայն որի՝ Երեմիա Քյոնուրճյանի նախապապն եղել Սարգիսը, պապը՝ Նահապետը, տատը՝ Յուդիտան²: Նրանց վերաբերյալ կենսագրական տվյալները, ցավոք, սակավ են: Երեմիայի հայրը՝ Մարտիրոսը, քահանա է ձեռնադրվում Երուսաղեմի պատրիարք Գրիգոր Գանձակեցու կողմից, երբ Քյոնուրճյանը տակավին երեք ամսեկան էր³: Հոգևոր սպասավորությունն իրականացրել է Վլանկայի Սուրբ Սարգիս հայկական եկեղեցուն⁴: Թերևս, մի կողմից, իր հաջողված ամուսնության, մյուս կողմից՝ անձնական հատկանիշների շնորհիվ եկվոր Մարտիրոսը կարողանում է ընդունելի դառնալ իր անհանդուրժողականությամբ հայտնի պոլսահայ միջավայրում, համագործակցում է ժամանակի հեղինակավոր ուժերի հետ⁵: 1652 թ. ամռանը Կ. Պոլիս այցի եկած Փիլիպոս Ա Աղբակեցի Ամենայն Հայոց կաթողիկոսը (1633-1655) Մարտիրոսին կարգում է մայրաքաղաքում Ս. Էջմիածնի «վեքիլ և աւագերէց», որը գլխավորապես պիտի իրականացներ Մայր Աթոռի գանձանակի վերահսկողությունը⁶: Մարտիրոս Քյոնուրճյանն իր անձով և հասարակական դիրքով մեծ հեղինակություն է եղել Երեմիա Քյոնուրճյանի համար, մեծապես կանխորոշել նրա ապագան: Հոր մասին իր բազմաթիվ հիշատակություններում Երեմիան նրան կոչում է «հարազատն իմ» կամ «տէրտէրն իմ»: Մարտիրոս Քյոնուրճյանը վախճանվել է 1681 թ. Կ. Պոլսում⁷:

¹ Այս տեսակետին են հարում Ն. Ակինյանը, նրա հետևությամբ՝ Հ. Սահակյանը (տես Ն. Ակինեան, Երեմիա Չէլէպի Քեօմիւրճեան, էջ 17, Հ. Սահակյան, Ըշվ. աշխ., էջ 9):

² Տոհմական այս վավերագրությունը մաս է կազմել Պ. Ջարդարյանի հավաքածուի, հետագայում հրատարակվել Գ. Բանալուրճյանի աշխատասիրությամբ (տես Երեմիա Չէլէպի Քեօմիւրճեան, Պատմութիւն հրակիզման Կոստանդնուպօլսոյ, Ստանպուլ, 1991, էջ 7): Այս վկայությունը հրատարակվել է նաև Կոմիտաս Քյոնուրճյանի իտալերեն վարքագրություններից մեկում (տես Ն. Ակինեան, Երեմիա Չէլէպի Քեօմիւրճեան, էջ 17):

³ Օրագրութիւն, էջ 309:

⁴ Երեմիա Քյոնուրճյանն այս եկեղեցին անվանում է «մեր եկեղեցի»։ «...և մեր ելեալ ի դուրս, տեսեալ զի եկեղեցի մեր էր, որ այրէր, որ ասի Սուրբ Սարգիս» (նույնը, էջ 24):

⁵ «...եղ ի տեղն իւր (Եղիազար Այնթապցիւն-Գ.Ա.) զհարազատն իմ զՏէր Մարտիրոս անուանեալն, որ ի ժամանակ՝ յորում այսր եկն վարդապետն, յայնմ օրէ ծանօթացան միմեանց և ոչ հեռացաւ ի մմանէ, այլ հանապազ կանխեալ կայր առ նա» (նույնը, էջ 29): Մարտիրոս Քյոնուրճյանը Արղնիի Ս. Աստուածածին Բարձրահայաց եկեղեցուն մվիրաբերված Հայսմավուրքի հիշատակարանում գրում է. «Եւ մեք Ս. Սարգիս եկեղեցոյս Տէր Մարտիրոս և Տէր Ովանես (այս Հովհաննէս քահանան եղել է Երեմիա Քյոնուրճյանի ուսուցիչը-Գ.Ա.) քահանայքս, որ միջնորդ եւ սպասաւոր եղաք սուրբ Յայսմաւուրք գրոցս, հարեալ էաք ի սէր վարդապետիս (Եղիազար Այնթապցիւն-Գ.Ա.), եւ միշտ ընդ մնա շրջէաք զցայգ և զցերեկ անանջատ կալով յեկեղեցական եւ յայլ ծառայական գործս» (Գ. Սրուանձտեանց, Թորոս աղբար, մասն Բ, Կ. Պոլիս, 1884, էջ 401):

⁶ Օրագրութիւն, էջ 37-38:

⁷ Ներածութիւն, էջ ԿԸ: Երեմիա Քյոնուրճյանը, հավանաբար, հոր մահն է ակնարկում այս խոսքերով. «Ի կարգ սցուն թաղեցաք՝ զքեօմուրճի սցուն պատուական» (Ստանպոլոյ պատմութիւն, էջ 51):

Կենսագրական տվյալները սուղ են Երեմիայի մոր՝ Յուդիտայի մասին, հայտնի է, որ կյանքից հեռացել է 1663 թ.¹, եղել է ժամանակի պոլսահայ մեծահարուստներից մեկի՝ Ամբակունի քրոջ դուստրը²: Ամբակունի գերդաստանը տոհմիկ ծագում ուներ՝ սերված Ակն գավառի Նավրեր (Նարվեր) գյուղից³: Ամբակունը զբաղվել է հացագործությամբ, ինչպես վկայում է Քյոնուրճյանը, գրագետ չի եղել, բայց մեծապես հովանավորել է հայ հոգևոր շրջանակների գրական պահանջները⁴, զբաղվել բարեգործությամբ⁵: Ամբակունը մեծ ազդեցություն է ունեցել թե՛ Երեմիայի հոր՝ Մարտիրոսի, թե՛ դեռ պատանի Երեմիայի կյանքում, աջակցել նրանց բոլոր ձեռնարկումներում: Փիլիպոս Աղբակեցի կաթողիկոսը ուխտագնացություն է նախապատրաստում դեպի Երուսաղեմ և նախքան այդ նամակ հղում Ամբակունին՝ առաջարկելով ժամանել Սուրբ երկիր և միասին երկրպագություն մատուցել Տիրոջ գերեզմանին: Չափազանց զգացվելով կաթողիկոսի առաջարկից՝ Ամբակունը, մի կողմ թողնելով բոլոր գործերը, շտապ ճանապարհի պատրաստություն է տեսնում՝ հետն առնելով նաև կնոջը և «սիրասուն Երեմիա թռանը (Երեմիա Քոնուրճյանին – Գ. Ա.)»: Ուխտագնացությունը սկսվում է 1649 թ. օգոստոսի 5-ին, ավարտվում 1650 թ. մայիսի 27-ին՝ տևելով շուրջ 10 ամիս (5 օր պակաս)⁶: Վերը հիշատակված Երուսաղեմի Գրիգոր Պարոնտեր պատրիարքի գրով Ամբակունը Կ. Պոլսի Սուրբ Սարգիս եկեղեցում կարգվում է պատրիարքական երեսփոխան՝ 12 տարի շարունակ իրականացնելով Երուսաղեմի գանձանակի վերահսկողությունը⁷: Ամբակունը մահացել է 1658 թ. նոյեմբերի 3-ին, անժառանգ. Երեմիա Քյոնուրճյանը եղել է նրա որդեգիրը⁸՝ վերջինիս կոչելով «մահտեսի հայր» կամ «պապ իմ»: Պահպանվել են տեղեկություններ Երեմիա Քյոնուրճյանի այլ ազգականների մասին ևս. Երեմիա Քյոնուրճյանը ունեցել է երկու եղբայր և մեկ քույր՝ ինքը լինելով նրանց ավագը:

¹ Արդեն 1664 սեպտեմբերի 14 թվակիր նամակում Մարտիրոս Քյոնուրճյանը գրում է Եղիազար Այնթապցուն. «...ին գերեխայն Կօմիկ (Կոմիտաս Քյոնուրճյան - Գ.Ա.) ո՞րպես թողում եւ գանառակ Գերզմ որո՞յ հանձն առնեմ, զպակասաւորն Երինեկ ո՞րպէս յետս ընկրկեմ...պակասեցան որդիքն ի մօրեն և անտիրացան ի գորովոյ ծնօղացն» (տես Դիւան Սուրբ Յակոբայ, «Սիօն», 1932, թիւ 9, էջ 278):

² Քյոնուրճյանը նրա մասին գրում է. «Եղբայր մօր ծնօղին մերոյ» (նույնը, էջ 7), «...առ Մղտեսին մօրաքեռւոյն իմոյ» (նույնը, էջ 39): Զմմտ. Գ. Սրուանձտեանց, նշվ. աշխ., էջ 403:

³ Ամբակունի մասին կարդում ենք. «Եւ էր նա ի գիւղէն Նավրերոյ յԱկան գաւառի, որդի Մարտիրոսի ունեմն մեծագնոյ» (տես Օրագրութիւն, էջ 307): Զմմտ. Գ. Սրուանձտեանց, նշվ. աշխ., էջ 403: Զավանաբար, այս վկայությունն է հիմք հանդիսացել Երեմիա Քյոնուրճյանի ծագումը Ակնից համարելու (տես Գ. Մրմրեան, Մասնական պատմութիւն հայ մեծատուններու, Կ. Պոլիս, 1909, էջ 37):

⁴ Մեզ հայտնի են նրա հովանավորությամբ Մայր Աթոռին, Արղնիի Ս. Բարձրահայաց եկեղեցուն և Սսի Թորոս կաթողիկոսին համապատասխանաբար նվիրաբերված Աստվածաշունչը (ՄՄ ձեռ. հմր. 348), Զայսնավուրք մատյանը և ասեղնագործ արծիվը:

⁵ «Ապրիլ ամիս օր Կիրակի Լուսաւորչի. Մղտեսին հաց արար աղքատաց» (Օրագրութիւն, էջ 67):

⁶ Օրագրութիւն, էջ 7-17:

⁷ Նույնը, էջ 309:

⁸ Արղնիի Բարձրահայաց Ս. Աստվածածին եկեղեցուն ընծայաբերված Զայսնավուրքի հիշատակարանում Մարտիրոս Քյոնուրճյանը գրում է. «Նաեւ գանդրանիկ որդեակն իմ, մերս յաւժարութեամբ, զԵրեմիա դպիրս, շնորհեալ ենք ինքեան որդեկութեան» (Գ. Սրուանձտեանց, նշվ. աշխ., էջ 403):

Մարտիրոսի գավակներից երկրորդը եղել է Գևորգը (1639-1703), քահանա է ձեռնադրվել Մարտիրոս անունով, բայց ինչպես պարզորոշ ցույց են տալիս վկայությունները, աչքի է ընկել անհանգիստ ու անպարկեշտ վարքուբարքով:

Բոլորովին այլ նկարագիր է ունեցել Քյոնուրճյանների կրտսեր որդին՝ հռչակավոր Կոմիտաս Քյոնուրճյանը (1656-1707): Կոմիտաս Քյոնուրճյանը աչքի է ընկել ստեղծագործական ընդունակություններով, ընդօրինակել ձեռագրեր, ստացել քահանայական կոչում: Կաթոլիկական դավանանքին հարելու պատճառով Կոմիտասը զոհ գնաց ազգային մոլեգնող հակամարտ պայքարին. 1707 թ. հոկտեմբերի 27-ին գլխատվեց: 1929 թ. ապրիլի 21-ին Ջոնի պապի օրհնությամբ դասվել է սրբերի շարքը՝ իբրև «Ջայ Սուրբ»: Քյոնուրճյան եղբայրների միևնուճար քույրը հայտնի է Իրենե կամ Երինեկ անունով:

Երեմիա Չելեպին հաճախ հիշատակում է հորաքրոջը, սակայն նրա անձի և ինքնության հետ կապված մանրամասներ չի հաղորդում¹: Պահպանվել է նաև Քյոնուրճյանի կնքահոր անունը, որը, ինչպես երևում է, պատահական մարդ չէր, եղել է Երուսաղեմի ուխտավոր²: Տեղեկությունները բացակայում են Երեմիայի կնոջ մասին. ամենայն հավանականությամբ ամուսնանում է 1654 թ. մայիսի 22-ին³: Ունեցել է չորս զավակ՝ երեք որդի, մեկ դուստր⁴: Որդիներն են Գրիգորիս, Սաղաքիա և Յովսեփ կամ Յովսեփիկ, դուստրը՝ Սուռնե: Գրիգորիս Քյոնուրճյանը եղել է իր ժամանակի փայլուն կրթություն ստացած երիտասարդներից մեկը, ավագանի անունն էր Ամբակում. Երեմիա Քյոնուրճյանը, իր խնամակալ մահտեսի Ամբակումի մահվանից 6 ամիս անց՝ 1659 թ., լույս աշխարհ եկած իր առաջնեկին, անզավակ այս ծերունու կտակի համաձայն, կոչել է նրա անունով⁵: Ծիշտ իր հոր պես Գրիգորիսը շատ վաղ տարիքից ակնառու ընդունակություններ է ցուցաբերել. տիրապետել է գրչության

¹ Քյոնուրճյանների տոհմական ճյուղագրությունից պարզ է դառնում, որ Մարտիրոսն ունեցել է երեք քույր՝ Աշխենը, Սոֆիան և Գայանեն:

² «...տարան զմեզ Յաճի Եվրենեցն որ էր կնքահայր մեզ» (Օրագրություն, էջ 141):

³ «[1654, մայիս] ԻՍ (21)-ին Կիրակի. պատրաստութիւն հարսանեաց և կէս աւուրս զնշանն արհնեցին քահանայք մեր համդերձ վարդապետօք ի Սուրբ Նիկողոս և վարդապետն բազում պատուէրս ետ նոցա ահացուցանելով թէ Կռիւ և մի խօսս ոչ առնելով՝ խաղաղութեամբ տարջիք գհարկն ձեր, որպէս սովոր են ոմանք առնել աղմուկս և կռիւս ընդ միմեանս փոքր ինչ իրաց: Եւ էր անձրև մեղմագոյն: Ը օր է ի Սուրբ Յոգոյ զալստեան և յիշատակ Կոստանդիանոսի թագաւորին և Եղիայի Կիրակի ասի աւուրս: Եւ երեկոյի ժամուս, որուն գային յամենայն կողմանցն հրաւիրեալքն ի հարսամիս՝ ի տուն Խօճա Պալէ, վարձելով զնա, անդ առնելով զըմթրիս մեր: Եւ սկսաւ առնել անձրև մեծ՝ մինչև յառնել հեղեղաց. ոչ կարացաք նստուցանել ի պարտիզի անդ, այլ նստան ի տունս և ի թախտս տանցն այնմ մի ի վերայ միոյ՝ հրաւիեալքն ամենայն» (Մույնը, էջ 53):

⁴ Իր մանկահասակ որդու՝ Յովսեփի մահագույժը հայտնող նամակում Երեմիա Քյոնուրճյանը գրում է. «...լուար զորս ի քերցն ուսեալ զտաղաչափութիւն զերգոց հիւսմանց» (Յաւելուած, էջ 449): Այս վկայությունն ուսումնասիրողներից ոմանց հիմք է տվել համարելու, որ Երեմիա Քյոնուրճյանն ունեցել է մի քանի դուստր. հնարավոր է, որ այստեղ նկատի են առնված Կոմիտաս Քյոնուրճյանի աղջիկները, հակառակ դեպքում մեզ հայտնի է Երեմիայի դուստրերից միայն մեկը:

⁵ «Տէր Աստուած որդեակ արու յորժամ տայ, հնդրեն զանունըն Ամբակում անուանեա՛, Անզաւակիս ըզյիշատակն միշտ պահեա՛, Ընդ պատմագիրս շարադրեա, կաց՝ բարով մնայ» (Յաւելուած, էջ 589):

արվեստին՝ նույնանալով ձեռագրական հիշատակումներում հանդիպող Ամբակունդ դարիկին: Ուսանել է Արարատյան աշխարհի նշանավոր մշակութային կենտրոններից մեկի՝ Յովհաննավանքի դպրոցում: Գրիգորիսը վարդապետական աստիճան է ստացել շատ երիտասարդ տարիքում՝ 23 տարեկանում կամ դրանից մի փոքր ուշ՝ օծում ստանալով Ամենայն Յայոց կաթողիկոս Եղիազար Ա Այնթապցուց: Երեմիա Չելեպիի վկայությամբ՝ նա շատ լավ է տիրապետել բեմբասացության արվեստին՝ մեծապես ազդելով հավատացյալ հոտի կրոնական զգացմունքների վրա: Ուսումնառությունն ավարտելուց հետո հոգևոր սպասավորության է անցել Պալաթի Սուրբ Հրեշտակապետ եկեղեցում, մահացել է 1692 թ. Պալաթի եկեղեցում բռնկված հրդեհի հետևանքով (Ժ. Ավետիսյանի կարծիքով)¹: Սիրասուն զավակի մահը ծանր հետևանքներ է ունեցել Երեմիա Քյոնուրճյանի համար՝ մեկուսի կյանքի մատնելով նրան:

Երեմիա Քյոնուրճյանի մյուս որդին՝ Մաղաքիան, նույնպես հետ չի մնացել իր նշանավոր գերդաստանի ավանդույթներից, եղել է գրիչ և ծաղկող, աշխատակցել է հոր հեղինակած «Աշխարհագրութիւն կամ Յայաստանեայց եկեղեցւոյ քարտեզ» գործին: Եղել է Հռոմում, այնտեղից անցել Երուսաղեմ, որից հետո՝ 1672 թ.՝ Ստամբուլ: Մաղաքիան Քյոնուրճյանի զավակներից միակն է, ում վախճանը հայրը չտեսավ: Նրա մահվան թվականը մեզ անհայտ է:

Երիտասարդ տարիքում է մահացել նաև Երեմիայի միակ դուստրը՝ Սուլմեն՝ որը թողնելով իր մինուճար Հովսեփ որդուն. «...Սողոմէ Ի ամաց դուստրն իմ ասէր առ իս մահիճն իւր լուայ թէ Սարայ չարսուի հուրն շիջաւ և իմ հուրն ե՞րբ շիջանի. զկնի Գ աւուրց մեռաւ դէկտեմբերի Իէ յաւուր տօնի Սրբոց Գլխաւոր առաքելոցն»²: Սուլմեն մահացել է 1690 թ. դեկտեմբերի 27-ին:

1680-ականների առաջին կեսին պիտի վերագրել թերևս Քյոնուրճյանի կրտսեր որդու՝ Հովսեփի մահը, որ կյանքից հեռացավ տակավին 14 ամսականում. «Եւ արդ չորեքտասան ամսոց էառ զվախճան»³:

Աղբյուրագիտական տվյալները խոսում են Երեմիա Քյոնուրճյանի կենսագրության անզամ ամենավաղ շրջանի վերաբերյալ: Արդեն ութ տարեկան հասակում Երեմիան ոչ միայն գրաճանաչ էր, այլև կատարել է իր առաջին գրչափորձերը:

¹ Երեմիա Քեօմիւրճեան, Պատուքիւն համառօտ, էջ 17:

² Վենետիկ ձեռ. հմր. 476, թ. 51ա:

³ Յաւելուած, էջ 449: 1666 թ. Ղլմպիկ կոչված Սահակ վարդապետը Հակոբ Ջուղայեցուն ուղղված նամակում հիշատակում է Եղիազար Այնթապցու կուսակիցներից Հովսեփին. «...յորժամ պատերազմեցաք մեք ընդ Երուսաղեմացւոյն ընդ զՅովսեփին եւ զՔօմուրճիւն եւ այլ բազմամբոխ ժողովրդեանն միայն մնացաք...» (Յ. Քիւրտեան, Յակոբ կաթողիկոս Ջուղայեցի, Ամթիլիսա, 1965, էջ 10): Հ. Քյուրտյանի կարծիքով՝ այս Հովսեփը Երեմիա Քյոնուրճյանի որդին է (տես նույնը, էջ 12), ինչը չի համապատասխանում իրականությանը: Կարծում ենք՝ խոսքն այստեղ Եղիազար Այնթապցու մերձավորներից Հովսեփ վարդապետի մասին է, ով թերևս իրականացրել է Երուսաղեմի հայկական տիրույթների տնտեսական վերահսկողությունը. այսպես, 1678 թ. Երեմիա Քյոնուրճյանի աշխատասիրությամբ լույս տեսած «Պատմութիւն Տեղեաց տնօրինականաց» գրքի հիշատակարանը վկայում է. «...տէր Յովսեփ վարդապետ հրամանատար (ընդգծումը-Գ.Ա., ՆԲՀ-ն բառը մեկնում է նաև որպես տնտես, կարգավորիչ) տեսառն Եղիազար կաթողիկոսին Երուսաղեմայ, կամակցութեամբ տեսառն Սուքիաս րաբունապետի ետուն տպագրել [«Պատմութիւն Տեղեաց տնօրինականաց»-ը-Գ.Ա.]» (Ա. Ղազիկեան, Հայկական նոր մատենագիտութիւն եւ հանրագիտարան հայ կեանքի, երկրորդ հատոր, Վենետիկ, 1905-1912, էջ 237):

1649 թ. ձեռնադրվել է որպես դպիր,¹ ապա որոշել է այդքանով սահմանափակել հոգևոր առաջխաղացումը՝ մերժելով սարկավագ ձեռնադրվելու՝ Եղիազար Այնթապացու առաջարկը: Ուսումնասիրողների մի խումբ՝ մասնավորապես առաջնորդվելով գաղափարախոսական նկատառումներով, Երեմիայի այս որոշման պատճառը համարում է հոգևոր դասի հռչի բարձրին անմասն մնալու ցանկությունը²: Նման տեսակետը մի փոքր չափազանցված ենք համարում. դժվար է պատկերացնել, որ հոգևորականի ընտանիքում ծնված պատանին, որ ակնհայտ համակրանք էր տածում իր շրջապատում գտնվող հոգևոր գործիչներից շատերի նկատմամբ և որ հետագայում պիտի սերտորեն համագործակցեր իր ժամանակի բարձրաստիճան գրեթե բոլոր հոգևորականների հետ ու իր սիրասուն որդուն տար հոգևոր ծառայության, մասն արտոնչող վերաբերմունք ունենար հոգևոր դասի հանդեպ: Երեմիան ինքը բացատրում է իր հրաժարվելու պատճառը. «[1656] Օրս Վարդապետն ասէր Տէրտէրիս թէ Բեր որ աւագ սարկաւագ օրհնեն՝ նւաստիս համար, եւ Տէրտէրս ոչ է տվեալ կամք, և երեկունս ասաց ինձ Տէրտէրս, և ես այլ **չկամեցայ, քանզի կարողութիւն պիտի քաշելու** (ընդգծումը-Գ.Ա.)»³: Ն. Ակինյանը այս վկայությունը հիմք ընդունելով՝ գտնում է, որ Երեմիան իր ուժերը տկար է համարել այդ գործի համար⁴: Չենք կարծում, որ դեռևս վաղ պատանեկան հասակից իր ընդունակություններով աչքի ընկնող Երեմիան, որ 15 տարեկանում ընդգրկված էր Փիլիպոս Ա կաթողիկոսին Կ. Պոլսում դիմավորող ներկայացուցչական խմբում՝ հետագայում մայրաքաղաքում նրան ուղեկցելու պարտականությանը⁵, ինչպես նաև ստանձնել էր իրեն վստահված մի շարք այլ գործառույթներ, իր և առավել ևս ուրիշների կողմից հոգևոր ծառայության համար համարվեր անընդունակ: Հնարավոր է, որ այս որոշման հիմքում ընկած էր պարզապես ցանկության բացակայությունը: Ուսումնասիրողներից ոմանք Երեմիայի հակաեկեղեցական տրամադրություններին են վերագրում նաև նրա հետևյալ վկայությունը. «[1656]...և Տէր Յակոբն ձայնեաց զիս և բռնութեամբ հագոյց շապիկս՝ սակս դպրութեան: Նոյեմբերէն ի վեր չի արարի դպրութիւն և այսօր հագայ շապիկ եւ արարի զդպրութիւն»⁶: Սա ավելի շատ համայնքային կյանքում տեղ գտած հակամարտ ուժերի բախումների արդյունք էր, որը չէր կարող շրջանցել տարաբնույթ կապերով այդ միջավայրին կապված Երեմիա Քյոնուրճյանին⁷: Պատկերը նույնն է նաև էջմիածնի գանձանակի

¹ «Փետրվար ամսոյ ԺԳ...ձեռնադրեաց Երուսաղէմի նուիրակ Խաչատուր վարդապետն... բազում դպիրս» (Օրագրութիւն, էջ 6):

² Լեո, նշվ. աշխ., էջ 358: Հ. Սահակյան, Երեմիա Քյոնուրճյան, էջ 12:

³ Օրագրութիւն, էջ 148:

⁴ Ն. Ակինեան, Երեմիա Չէլէպի Քեօմիւրճեան, էջ 34:

⁵ «...և ես չնչինս և տրուպս ամենեցուն կայի առ պապոյն իմ Մղտեսին ի Եաղուպենցն արեցեալ՝ թէ զգալ նորա լուեալ ելանիցենք ընդ առաջ» (Օրագրութիւն, էջ 30, տես նույնը, էջ 38-39, 40, 41):

⁶ Օրագրութիւն, էջ 181:

⁷ Երեմիա Քյոնուրճյանը, իհարկե, ունեցել է հոգևորականների հետ գժտության առանձին դեպքեր, սակայն դրանք չեն եղել նրա կողմից հոգևոր դասը ամբողջովին անտեսելու հետևանքով: Հետաքրքրական է Սուրբ Սարգիս եկեղեցու հոգևորականների հետ նրա տարածայնությունների վերաբերյալ մի վկայություն, որը շատ որոշ արտահայտում է այդ տարիներին օսմանյան մայրաքաղաքում գոյացած կուսակցական պայքարի հետևանքները, որոնց բերումով Քյոնուրճյանը, փաստորեն, օտարացել էր նաև

հանդեպ Քյոնուրճյանի ստանձնած պարտավորությունների վերաբերյալ: Կ. Պոլիս կատարած Փլիկպոս կաթողիկոսի վերոհիշյալ այցի ժամանակ Մահտեսի Ամբակունին վստահվեց էջմիածնի գանձանակը բռնելու պարտավորությունը, որի կատարողի դերում գոմե Օրագրության էջերում ավելի շատ տեսնում ենք Երեմիային¹, ներհամայնքային լարված իրադրության պայմաններում, սակայն նա հրաժարվում է կատարել իր այդ պարտավորությունը, երբ Եղիազար Այնթապցին Երուսաղեմից նամակով արգելում է բռնել Մայր Աթոռի գանձանակը՝ պատճառաբանելով, որ այդ գումարը էջմիածնականները վատնում են վիուկների և այլ անօրինությունների վրա²: էջմիածնական հասույթի կազմակերպումից զատ՝ Երեմիա Քյոնուրճյանը դեռևս վաղ պատանեկան տարիքից իրականացրել է նաև Կ. Պոլսում Երուսաղեմի գանձանակի հասույթի գրագրությունը³: Տիրապետել է նաև երաժշտարվեստին. «...և մեք յաջմե և յահեկե ասեաք զերգս շարականաց մինչ ի կամարն Սրբոյն Գեորքայ»⁴: Տասնութ տարեկանում միայն հանձն է առնում սովորել օսմաներեն. «Եւ օրս⁵ արծայ զՏաճկաց էլիֆայեն (այբուբեն – Գ.Ա.) և մտայ ի նոր բան որ կոչի ամմե. եւ զէլիֆն Աւագ Բշի ըսկսայ ի յողորմութիւնն Քրիստոսի ապաւինելով. զի բազում անգամ ի մանկութենէ ի հետ հարկեալ ի ծնօղաց եւ շատ նախատինս կրեալ վասն բանիս, զի պիտանի էր հանապազ»⁶: Երեմիա Քյոնուրճյանի կրթության հարցը որոշակի տարակարծությունների տեղիք է տվել ուսումնասիրողների շրջանում. Մ. Նշանյանը, որ գլխավորապես հիմք է ընդունել Երեմիա Չելեպիի ինքնակենսագրական սովյալները, համարում է, որ նա ուսումնառել է Տեր Յովհաննեսի մոտ⁷: Հայագետների մի խումբ համարում է, որ բազմակողմանի գիտելիքների այն պաշարը, որ ուներ Քյոնուրճյանը, դժվար է ձեռք բերել միայն մի մարդու աշակերտելով⁸: Արդեն հառաջացած տարիքում

ժամանակին իր հոր քահանայությանը հանձնված եկեղեցուց. «[1658] Եւ մեք ընդ նոսա ոչ գնացաք կամ շարժեցաք ի տեղուդէ մերմէ, որպէս և յառաջագոյն էաք, թեպետև շատ աղաչեցեալ լինեաք յերիցանց ծանօթից, այլ կայաք վիրաւորեալք ի նոցանէ հանապազ (խոսքը Սուրբ Սարգիս եկեղեցու հոգևոր դասի մասին է-Գ.Ա.)» (նույնը, էջ 304):

¹ «[1655] Օրս շաբաթ (26 Մայիս). էջմիածնի թապախն բռնեցի ի մեր ժամս փոխանակ Մղտեսուն», (նույնը, էջ 75, տես նաև նույնը, էջ 139, 141, 145):

² «[1656]...ծանիք Ձ եկեղեցոյ լեալ քահանայք եւ ժողովուրդք, որ վասն գանձանակին էջմիածնայ՝ այլ չբռնել, քանզի նոքա առեալ գտուրս և զողորմութիւնս մեր, առեալ տան կախարդաց և վըհուկաց, որ և ինձ դարան գործել կամեցան՝ հանել ի կենաց. վասն որոյ և այս հրամանաւ մեր եղև, որ և այսուհետև թող բարձցի ի ձեմջ, և եթէ ոք ընդդիմանայցէ, թո՛րջ գայ տայ զպատասխանին բռնաւորաց, և ի թագաւորէ կարենք զիրեանք ճերիմել. և այս լիցի ճուռում անօրէն գնացից նոցա: Եւ ես ոչ բռնեցի զթապախն և այլն նոյնպէս» (նույնը, չջ 170):

³ Գանձանակի վերահսկողությունը Երուսաղեմի պատրիարքը հանձնարարել էր Ամբակունին. «Ստիպէր (Ամբակունը-Գ.Ա.) գժողովուրդն իբր զքահանայս և զվարդապետս թէ Տուք լուսպին Տանն սրբոյ հոգոց ձերոց, որում գալուրի զգիր չնչինս ծրէի» (նույնը, էջ 309):

⁴ Նույնը, էջ 241: Մ. Նշանյանի կարծիքով՝ Երեմիան եղանակներ է հորինել նաև իր ստեղծագործությունների համար (տես Ներածութիւն, էջ ԺԹ):

⁵ Գրառումը կատարել է 1656 թ. ապրիլի 15-ին:

⁶ Օրագրութիւն, էջ 150:

⁷ Երեմիա Քյոնուրճյանը նրան կոչում է «վարպետն ին» (նույնը, էջ 141, 173):

⁸ Ստամբուլոյ պատմութիւն, էջ 151: Հ. Սահակյան, Երեմիա Քյոնուրճյան, էջ 10:

Երեմիան ինքն էլ զբաղվում է ուսուցչությամբ. իր որդուն՝ Գրիգորիսին ուղղված գրության մեջ կարդում ենք. «Վասն որոյ պարտիս սիրել զիս որպէս զվեհագոյն վարժապետ»¹: Ահավասիկ, մեկ այլ վկայություն ևս. «[1656] Բշի օրս (21 հուլիս) գնացի ի ժամ եւ անտի Շերպէթճի Գրիգորն առեալ տարաւ զիս ի տուն եւ անդ նստեալ մինչև յետինք. և զտղան հանեալ ի քովէս կամաւ իմով եւ ետուն յոսկերչութեան»²: Կարծում ենք, որ այստեղ խոսքը վերաբերում է ոչ թե մտավոր ուսումնառությանը, այլ արհեստի, տվյալ դեպքում՝ հացագործության հմտություններին տիրապետելուն:

Հացագործության բնագավառում նա եղել է Մահտեսի Ամբակումի փոքի վերատեսուչը³: Ակնհայտ է, որ իր հացավաճառ խնամակալի կարողության տնօրինումը կարևոր է եղել Քյոնուրճյանի համար: Դրա պարզագույն վկայությունն է այն, որ բազմազբաղ Երեմիան իր ժամանակի մի զգալի մասը հատկացրել է այդ աշխատանքին⁴, հագեցած իր առօրյայի վերաբերյալ նրա զանազան հիշատակումների շարքում շատ են «անտի ի խանութ գնացի» բառերը⁵: Պարզվում է, որ Երեմիան նույնիսկ շատ կարճ ժամանակով ձերբակալվել է հարկահավաքների կողմից⁶, ինչը նորից հուշում է, որ նա շարքային հացթուխ չի եղել: Երեմիա Քյոնուրճյանի կյանքում հացագործությանը հատկացրած մեծ տեղը երևում է նրա պատմագրական ժառանգության տարբեր դրվագներում⁷:

Երեմիա Քյոնուրճյանը իրականացրել է նաև Կ. Պոլսի համայնքային ղեկավարության գրագրությունը, եղել է պատրիարքարանի գրագիրը և խորհրդականը⁸: Նրան այս պաշտոնում առաջադրել է ժամանակի նշանավոր գործիչներից մեկը՝ Մարտիրոս Ղրիմեցին, ով զբաղեցնում էր Կ. Պոլսի պատրիարքի պաշտոնը (1659-1660)⁹: Այդ տարիներին Կ. Պոլսի հայկական գաղթավայրում մոլեգնող անառողջ

¹ Յաւելուած, էջ 457:

² Օրագրութիւն, էջ 199:

³ «Ձայս թուղթս գրեցի եւ ելեալ գնացի ի խանութ եւ երեկոյիս գնացի ի փուռն եւ անդ կացի ի գիշերիս **վասն վերակացութեան բանի** (ընդգծումը-Գ.Ա.)» (նույնը, էջ 174):

⁴ «[1655]...չէր էմինէ մանզուլ եղած աղան նեղացուց զմեզ վասն ցորենոյն, զոր տվեալ և զըստակն առեալ. այժմն ասէր թէ Ոչ առի զըստակն, և աստ և անդ տանէր. և սապիթ արարաք առաջի փաշային, և զնաց նա անաթալից», նույնը, էջ 64 (հետագա ընթացքի մասին տես նաև նույնը, էջ 67), «[1655] եւ Բշի (10 Ապրիլ) առաւօտուս ելեալ զնացաք ի խանութ և նստեալ էաք մինչև Գ ժամ աւուրս, և լւաք զծայն աղաղակի մեծի երթևեկելոյ արանց, զի ոմանք յայս կոյս և յայն ընթանային և ոմանք ի տունս իւրեանց մտեալ փախչէին, և մեք դողալով՝ փակեալ զխանութս և ի տունս մեր աճապարեցաք փախչելով» (նույնը, էջ 70):

⁵ Նույնը, էջ 150 և այլն:

⁶ «[1656] Եշի օր (29 Մայիս) զնացեալ իմ ի խանութ և ըմբռնեալ խարածոցն զիս՝ զնացեալ առի զթուղթն, յիւրեանց թվականին ՌՎե-ն էր, և զնացի ի խանութ» (Օրագրութիւն, էջ 180):

⁷ «[1657] եւ աւուրքս հացն կրկին սակաւանայր եւ հազիւ գտանէր զի ոչ գոյր մաւ ցորենոյ, զի ծանր ծմեռ արար սակաւ սակաւ, և որ ցորեան գտանէր՝ հացածախքն Հէ ըստակ առնէին զքիլակն և ընդ մմին գարի խառնեալ ապա հաց առնէին» (նույնը, էջ 231):

⁸ «[1656]...և զԵ թուղթն չնչինս գրեաց» (նույնը, էջ 166), «[1656]...և զՎարդապետն անդ թողեալ՝ ես գնացի ի տուն գրել զգիր Եջմիածնի Տէր Յովհանէսին» (նույնը, էջ 173): «[1656]...Մարտիրոս վարդապետն թուղթ գրել երես թէրթրտաղու...զայս թուղթս գրեցի» (նույնը, էջ 174, տես նաև նույնը, էջ 230, 231, 267, 272 և այլն):

⁹ «Եւ իբրև նստաւ Մ[ար]տ[իրո]ս պատրիկ խնդրեաց զմեզ ոգով չափ վասն Աստուծոյ նստեալ ընդ իմ զնօտարութիւն առ[ա]ջ[նորդայ]կան գործոցս արասցես զոնեա սակաւ սակաւ զեկեղեցական գործոց և

կրքերը չշրջանցեցին նաև Երեմիա Քյոնուրճյանի և Մարտիրոս Ղրիմեցու վաղեմի բարեկամությունը: Երբեմնի համախոհներ Եղիազար Այնթապցու և Մարտիրոս Ղրիմեցու հարաբերությունները լարվածության գագաթնակետին հասան, երբ Եղիազարը սկսեց որոշակի դժկամությամբ վերաբերվել իր գործուն միջամտությամբ պատրիարք նշանակված Մարտիրոսին և ոչ միայն չաջակցեց, այլև կրավորական դիրք բռնեց նրան հակընդդեմ ուժերի կազմակերպած դավադրությունների նկատմամբ: Լարվեցին նաև Երեմիա Քյոնուրճյանի և Մարտիրոս Ղրիմեցու հարաբերությունները, իսկ որոշ ժամանակ անց նույնիսկ թշնամացան: Երեմիա Քյոնուրճյանը Մարտիրոս Ղրիմեցու ջանքերով Կ. Պոլսի պատրիարք դարձած Կարապետ Կեսարացու տգիտությունն ու անընդունակությունն այսպանող մի նամակ է ուղարկում Ղրիմեցուն՝ դատապարտելով նաև նրան, որը այս նամակը կնքում և ուղարկում է Կարապետ պատրիարքին: Դրանից հետո նրանք հետապնդում են Երեմիա Քյոնուրճյանին, որը մի կերպ խույս է տալիս ձերբակալությունից և թաքնվում:

Չափազանց սերտ են եղել Երեմիա Քյոնուրճյանի հարաբերությունները ժամանակի նշանավոր արևմտահայ գործիչներ Աբրահամ (Ապրո) Չելեպիի և Եղիազար Այնթապցու հետ: Աբրահամ Չելեպին (1620-1676)¹ եղել է ժամանակի մեծահարուստ վաճառականներից մեկը՝ մեծ համակրանք ու վստահություն վայելելով օսմանյան իշխող վերնախավի շրջանում²: Երեմիան եղել է Ապրոյի հոգեզավակը³:

գօրինացն հոգ տարցուք եղծելոցն» (Վենետիկ, ձեռ. համար 476, ք. 167բ-168ա):

¹ Համաձայն հիշատակագրի՝ Աբրահամ Չելեպին մահացել է. «հիսուն և հինգամաց, ի թուրակնութեան հայոց հազար հարիւր քսան և հինգ» (Յ. Քիւրտեան, Հայոց գաղթը Կամենիցէն Ֆիլիպէ. պատմական վաւերաթուղթ մը, «Բազմավէպ», 1927, թիւ 8-9, էջ 238): Հ. Քյուրտյանը նրան նվիրված կենսագրական ակնարկում նրա ծննդյան տարին ընդունում է 1620 թ.՝ ըստ երևույթին ենթադրելով, որ մահվան պահին՝ 1676 թ. ապրիլի 5-ին, նա դեռ չէր լրել իր 56-ամյակը (տես Յ. Քիւրտեան, Նիւթեր պուլկարահայոց պատմութեան համար. Ապրոյ Չելեպի, «Բազմավէպ», 1925, թիւ 9, էջ 258): Ապրոյի ծննդյան օրը որոշակի չէ, եթե ընդունենք, որ այն ընկնում է մինչև ապրիլի 5-ը, ապա հնարավոր է, որ նա ծնված լինի 1621-ին:

² Այս պարագայում Ապրոյի կենսագրությանն առավել հանգամանալի անդրադառնալը դուրս է մեր նպատակից, ուստի կբավարարվենք միայն նրա և Երեմիա Քյոնուրճյանի հարաբերություններին անդրադարձ կատարելով:

³ 1661 թ. Ապրո Չելեպին նվիրված ներբողում Երեմիա Քյոնուրճյանը գրում է (վերջատառերը՝ ԷՐԷՄԻԱՍ).

«Երեմիաս Դարամաղեաց Բիւզանդիէ.
Եղէ ծանօթ բարեբախտին այնմ որ տէր է.
Հոտեալ զփանաքս ընդ որոցն իւր հոգեծնաբար.
Ինքն և բամբիշն զնեզ խնամեալ ծնողաբար.
Էառ ի գիրկ ըստ գորովոյն որ անտեսն է.
Եղև տածող ի ծոց սիրոյն, որ անծախ է...
Մայրն որ երկուց որոց լինէր յոգնափարթամ.
Լինել երից ըստ իմ համազոյգ կար ընծական.
Իմս երախտեաց ուր թէ հնար զի հատուցի.
Ըստ երկու կենացն ի յԱրարչէն փոխադրեսց.
Այսր ի քաղաքս շնորհաւոր գալուստ սոցին.
Հազար հարիւր և տասնեկի թվական հակա.
Սոցին ծառայ տինայ որդեակս հոգեսարասս

Վերջինս աջակցել է նրան տարբեր ձեռնարկումներում¹: Ապրոյի հանձնարարությամբ Երեմիա Չելէպին պարտավորվում է ղեկավարել կրակի ճարակ դարձած Ս. Նիկողայոս եկեղեցու վերականգնման աշխատանքները, սակայն շինարարությունը սկսվել էր առանց պետական հրամանի, ուստի Մորեայում (այժմ՝ Պելոպոնես թերակղզի, գտնվում է Յունաստանի հարավում) գտնվող Ապրոն նամակով դիմում է Երեմիա Քյոնուրճյանին՝ խորհուրդ տալով քանդել եկեղեցու երեք խորանը և այն վերածել դպրոցի²: Կ. Պոլսում ծայր առած ներազգային պայքարի ժամանակ Երեմիա

Սոյն շարադրող նուտար չնչին Երեմիաս» (Ղ. վրդ. Փիրղալենեան, Յիշատակարանք կամ Նշխարք պատմութեան հայոց, հատոր Բ, ՄՍ Անտիպ ձեռագրացուցակների ֆոնդ, հմր. 4515, ք. 486): Իր «Կոնդակ»-ի հիշատակարանում Երեմիան գրում է. «...և յիշեսցի պարոն Աբրահամ Չելէպին. և վասն իմս անարժանութեան որ նորուն բարեստութեան սէր ցուցեալ ընտանեցոյց» (նույնը, ք. 507): Ղ. Փիրղալենյանը ծանոթ է եղել նաև Քյոնուրճյանի «Օրագրութիւն», «Վիպասանութիւն յԱպրո Չելէպի» գործերին: Ապրոյի մահվան նկարագրության մեջ Երեմիա Քյոնուրճյանը չի թաքցնում նաև իր ապրումները. «...մեք կորուսաք զվաղեմի գորովագութն մեր, տարագրեցաք իբրև ի հարազատութեան, լքաւ քաղցրալուրն որ արգահատերն զմեզ որպէս զորդիսն: Վասն որոյ և ողբասցուք ըստ ողբերգող տեսողին որ ի հնուն որոյ անուանակոչութեան պատմող ճառիս թէ որք մնացաք և ոչ գոյ մեր հայր» (Յ. Քիրտեան, Նիւթեր պուլկարահայոց պատմութեան համար. վաւերագրութիւն մը, «Բազմավէպ», 1929, քիւ 11-12, էջ 347):

¹ Երեմիայի՝ Ապրոյին հղած ուղերձում կարդում ենք.

| | |
|---|--|
| «Ով Չելէպի դու պերճափառ, Մեզ յայտնեցից զմտացն իմ դառ, Եվ ծանուցից զտապս որ ի վառ, Որ ի բանից սիրտս է քանզառ: | Յաղագս ուսման տառից սրբոց, Եւ իմանալ զբանքս զըրոց, Աշակերտել սուրբ իմաստնոց, Եւ հասանել այնց ասելոց» (Յաւելուած, էջ 559): |
|---|--|

Տողերը վկայում են, որ Երեմիա Քյոնուրճյանը ուսումնառության ծրագրեր է ունեցել, սակայն համապատասխան խորհրդատու կամ ուսուցիչ չի գտել.

«Չունիմ եղբայր խորհրդակից,
Եւ կամ խոհեմ սուրբ յարակից,
Կամ ի քաղաքս սահմանակից,
Ոք որ ցանկայ սուրբ իմաստից...
Անձն իմ խնդրէ բայց չգտանեմ,
Քանզի կարի անարժան եմ» (նույնը, էջ 560):

Այս ժամանակ էլ Կ. Պոլիս ժամանող Ապրո Չելէպին՝ իբրև լուսատու աստղ, հայտնվում է Երեմիայի կյանքում, որից ընծա ստանալու նպատակով նա Ապրոյին նվիրում է այս գործը.

| | |
|---|---|
| «Վաղվաղ սկսայ տրակ մի գրել, Ըստ աղքատ մտացս զինքըն գովել, Զի արժանի է զայնք պատուել, Որ իմաստից են ցանկացել: | Թէ տաց ընծայ եւ հիտայի (ընծա-Գ.Ա.), Ծանոթացեալ ընդ հայրն եւ որդի, Ըղծանացն իմ հասանի, Զբաղձալիքն իմ տեսանի:... Յայնժամ խորհուրդ ի միտ առի, Զտրակն փոխարկել քուն անունի» (Յաւելուած, էջ 561): |
|---|---|

² Յ. Քիրտեան, Նիւթեր պուլկարահայոց պատմութեան համար, «Բազմավէպ», 1925, էջ 260: Ի դեպ, հիշատակագիր վկայություններից պարզ է դառնում, որ Կ. Պոլսի Ս. Նիկողայոս եկեղեցուն մինչ այդ գործել է «դպարատուն»՝ ըստ էության, հոգևոր հիմունքներով. Գրիգոր Տաթևացու՝ 1618 թ. Կ. Պոլսում ընդօրինակված «Գիրք հարցմանց»-ի հիշատակարանում կարդում ենք. «Եւ հանդիպեալ Ըստամպոլ, ի դուռն Ս. Նիկողայոս եկեղեցոյն, ի դպարտանն ունեմն...» (Հայերեն ժէ դարերի հիշատակարաններ, հ. Ա, կազմեցին՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երևան, 1974, էջ 643), 1621 թ. այստեղ ընդօրինակված

Քյոնուրճյանին շարունակում ենք տեսնել իբրև Աբրահամ Չելեպիի համախոհ և կուսակից: Պատկերը չափազանց կտրուկ փոխվում է Ապրոյի մահից հետո: Վերմ արդեն ականջալուր եղանք իր խնամյալի վախճանը ողբացող Երեմիա Չելեպիի տառապանքներին, պարզվում է, սակայն, որ դրանք այդքան միանշանակ չեն եղել: Պահպանվել է Ապրոյի մահվան առնչությամբ Երեմիա Քյոնուրճյանի նամակը՝ ուղղված Եղիազար Այնթապցուն¹, որն իր փոքրոգությամբ Յ. Օշականին ստիպել Երեմիա Քյոնուրճյանին համարել «խճող, անկայուն, պատեհապաշտ», ուն հատուկ էին պոլսահայ քաղքենու բոլոր բնորոշումները²: Ուսումնասիրողները բարձրահունչ գնահատականների և մակդիրների են արժանացրել Երեմիա Քյոնուրճյանին, որոնք, իհարկե, բխում են նրա անձի և գործի կարևորությունից, սակայն պիտի ասել, որ մատենագրական տվյալներին հարևանցի հայացքն անգամ հուշում է Քյոնուրճյանի հակասական մարդկային նկարագրի մասին, որը կոծկելու անհրաժեշտություն չենք տեսնում և կարծում ենք, որ նրա պատմագրական ժառանգությունը համակողմանի քննության նյութ կարող է դառնալ նաև հեղինակի կերպարի խորապատկերում դիտարկելիս: Այս դեպքում Յ. Օշականը դիպուկ է նկատում, որ «ամհատին շարժումները միշտ անհատին չեն պատկանիր»³: Կ. Պոլսում վախճանված Յակոբ Դ Ջուղայեցի Ամենայն Յայոց կաթողիկոսի մահվան առնչությամբ Եղիազար Այնթապցուն ուղղված մի նամակից (1680 թ. օգոստոսի 10-ին թվագրվող – Գ. Ա.) պարզ է դառնում, որ Յայոց վեհափառն միառժամանակ անթաղ է մնացել Գրիգորիս Քյոնուրճյանին վարդապետ չձեռնադրելու պատճառով՝ Քյոնուրճյանների ունեցած հակառակության արդյունքում⁴:

Ժողովածուի գրիչն ավանդում է. «Գրեցաւ գիրքս այս...ի հոյակապ և ի հռչակաւոր մայրաքաղաքիս Բիւզանդիոյ, որ այժմ որջորջի Ստամպօլ, ի դուռն և ի դարատանն Ս. Նիկողայոսի Սքանչելագործի», (Ուլյնը, հ. Բ, Երևան, 1978, էջ 13): Ինչպես տեսնում ենք, XVII դարի 10-20-ական թթ. դրությամբ Ա. Նիկողայոս եկեղեցուն գործել է դպրատուն, որը Երեմիայի օրոք չի գործել: Յայունի չէ, Երեմիան ծրագրել էր նախկին դպրանոցի պես հոգևոր հիմունքներով կազմակերպել կրթության գործը, թե՛ աշխարհիկ որոշ տարրեր ներմուծել, սակայն, ինչպես երևում է, հաջողություն չի ունենում, ավելին՝ դպրոցաշինության հարցին իր վերաբերմունքը հակադարձ համեմատական էր ժամանակակիցների մոտեցումներին.

«Մեզ ոչ մեղրեսէք պիտոյք՝

Քանզի մերս որ խափանեցան,

Ցաւ է մեզ այլոց դիտել՝

Անգլուխ ազգ մեր՛ւ անիշխան» (Ստամպօլյոյ պատմութիւն, էջ 114):

¹ Այս նամակն իսկապես աչքի է ընկնում հեղինակին չվայելող մամրախնդրությամբ, քանի որ երկար տարիներ Ապրոյի հովանավորությունը վայելելով՝ մահվանից հետո նրա անձի վերաբերյալ ստորացուցիչ մերկացումներն անտեղի են և ուշացած: Նա հրաժարվում է անգամ գրել Ապրոյի տապալանագիրը. «Որոյ կեռօր վերայ քարին հարկեցաւ յինէն գրել զանուն եւ զթուական յիշատակութեանք. պատասխանեցի թէ Ձեռն իմ ոչ ընթանայ առ ի գրել վասն յիշատակի մորս բան ինչ, քան թէ զբան Մարգարէին թէ Այս այն այրն է որ ոչ արար զԱստուած իւր օգնական, այլ յուսացաւ ի մեծութիւն իւր եւ զօրացաւ ի մանրութեան իւրուն» (Յաւելուած, էջ 411): Մեկ այլ տեղ կարդում ենք. «Ապրօս չէր սորա (նկատի է առնված ոմն «Անդօսն կեսավոր») մի մատն՝ մառ եհան ըստ իւր ազահութեան» (Ստամպօլյոյ պատմութիւն, էջ 77):

² Տես Յ. Օշական, Երեմիա Չելեպի, «Սիօն», 1940, թիւ 1-2, էջ 30:

³ Նույն տեղում:

⁴ «Քօմուրճին եւ իւր Նեռան զաւակ չէրեմիայն անկեալ առ դրացովք եւ զումարեալ զամենայն մերձակայ բնակիչք տաճիկսն...արարին խափանումն եւ բռնութեամբ ետուն հանել ի քաղաքէն, եւ

Երեմիա Քյոնուրճյանի անձի բազմաթիվ նրբերանգներ են բացահայտվում Եղիազար Այնթապցու հետ նրա հարաբերությունների պատմությունը դիտարկելիս: Եղիազար Այնթապցին եղել է դեռևս պատանի Երեմիա Քյոնուրճյանի ընդօրինակման առարկան՝ նրա սիրելի «վարդապետը»: Ընտանեկան վաղեմի կապերով իրար կապված այս երկու անձնավորությունները հետագայում դառնում են ջերմեռանդ կուսակիցներ՝ համագործակցելով ազգային կյանքի տարատեսակ հարցերի շուրջ: Սակայն նրանց վիճակված չէր խաղաղ վայելելու իրենց բարեկամությունը. Եղիազար Այնթապցու հախումն կյանքի վայրիվերումները հաճախ իրենց մրկապատույտի մեջ են առել նաև Երեմիա Չելեպիին: Երուսաղեմում հայկական ունեցվածքի շուրջ առաջացած իրավիճակը հոգուտ հայոց փոխելու մտադրությամբ Եղիազար Այնթապցին համագործակցում է 1658-1659 թթ. Օսմանյան կայսրությունում սկիզբ առած ջելալիական խոշոր ապստամբության կազմակերպիչների հետ, իսկ շարժման ձախողումից հետո 1659 թ. փետրվարին ձերբակալվում: Երեմիա Քյոնուրճյանը ջանադրաբար ձեռնամուխ է լինում ինչպես մինչ այդ փախուստի մեջ եղող վարդապետին հուսալի թաքստոց ապահովելուն, այնպես էլ նրան ազատ արձակելու գործին՝ վերջինիս հետ նամակագրական շփման և անմիջական հանդիպումների ժամանակ հաճախ վտանգելով իր անձը¹: Նա գործում դերակատարողություն է ունեցել նաև Հակոբ-Եղիազարյան կոչվող հայտնի հակամարտության ժամանակ: Արևմտահայոց կաթողիկոսություն հաստատելու Եղիազար Այնթապցու ծրագիրը չափազանց հանդուգն էր նույնիսկ այդ օրերին Մայր Աթոռից դժգոհություններ ունեցող գործիչների համար: Եղիազարի այս հավակնոտ ծրագրում իրեն վերապահված դերակատարությամբ ու շահերով հանդերձ Սսի Խաչատուր կաթողիկոսը, այնուամենայնիվ, որոշում է ազգային շրջանակներին տեղյակ պահել Եղիազարի մտադրությունների մասին: Հարցի առնչությամբ հրավիրված խորհուրդը որոշում է Եղիազարի մտերիմ Երեմիա Քյոնուրճյանին ուղարկել նրա մոտ՝ հորդորելու հետ կանգնել վտանգահարույց ծրագրից: 1664 թ. Երեմիան մեկնում է Հալեպ, սակայն ապարդյուն ջանքեր է թափում տարհանոզելու Այնթապցուն, ավելին՝ կասկածվում է Եղիազարի հետ համագործակցելու մեջ և բանտվում Սիրիայի արևմուտքում գտնվող Հոմս քաղաքում, սակայն բավարար ապացույցների բացակայության պատճառով շուտով ազատ է արձակվում: Հետագայում ուսումնասիրողները փորձել են սեպ խրել Երեմիա Քյոնուրճյան-Եղիազար Այնթապցի մերձակցության արանքում՝ շատ դեպքերում ձգտելով Երեմիային շաղկապել հայոց եկեղեցու կենտրոնական իշխանությանը՝

տարեալ ի Բէկօղլին թաղեցաք:...Պատճառն այս էր, որ նզովեալ թոռն ունի արեղայ եղեալ յայսմ անի, բերին առ հոգևորտէրն յառաջ քան զՀամբարձումն եւ բազումս թախանձեցին տալ նմա իշխանութիւն վարդապետութեան, զոր ոչ հաւանեալ զվեհն՝ ասելով թէ տղայ է եւ նոր արեղայ. երթեալ էջմիածինն ուսցի զկատարելութիւն ուսման, եւ ի դեպ ժամանակի կատարեսցի խնդիր ձեր» (Յ. Քիւրտեան, Յակոբ կաթողիկոս Ջուղայեցի, էջ 61, հմմտ. Ներածութիւն, էջ ԾԹ): Հետագայում Երեմիան, հնարավոր է, վերանայել է իր հակընդդէմ կեցվածքը. Հակոբ Ջուղայեցու գերեզմանը նա ակնհայտ պատկառանքով է հիշատակում. «Վարդապետ կանգնեա յոտին՝ հանգուցեալ հոգւոցն ի մաղթան./ ՅԱԿՈՒԲ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ Եւ այլոց սակս՝ ըզՀայր մեղան» (Ստամպոլոյ պատմութիւն, էջ 80):

¹ Տե՛ս Օրագրութիւն, էջ 306-307, 319-321:

ի դեմս կաթողիկոս Հակոբ Դ Ջուղայեցու¹: Սկսած 1660-ական թթ. վերջից՝ Երեմիա Քյոմուրճյանը դադարում է իր ժամանակի անցքերը շարադրել նախկին մանրաստուգությամբ, ուստի չենք կարող որոշակի ասել, թե ինչ ընթացք ունեցան նրա և Եղիազար Այնթապցու հարաբերությունները: Վերջին վկայությունները վերաբերում են գլխավորապես Եղիազարի կաթողիկոսության շրջանին, երբ նրան ուղղված իր մամակներում Երեմիան, հնարավոր է, որոշակի դադարից հետո, նորից իր հիացմունքն ու համակրանքն է հայտնում նշանավոր այս գործչի նկատմամբ²:

Հայտնի է Երեմիա Քյոմուրճյանի անձնական շփումների փորձը ժամանակի մեկ այլ պատմագրի՝ Ջաքարիա Քանաքեռցու հետ³: Մտերիմ հարաբերությունների մեջ է եղել քաղաքական, տնտեսական և մտավոր գործունեությամբ զբաղված իր շատ ժամանակակիցների հետ թե՛ հայ ու եվրոպական, թե՛ օսմանյան շրջանակներում⁴:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում Երեմիա Քյոմուրճյանի «Չելեպի» պատվանունը: Այս տիտղոսի և առհասարակ չելեպիական դասի վերաբերյալ հայագիտությանը հայտնի են որոշ ընդհանրացումներ: Արդ, փորձենք դրանք դիտարկել վերջին տասնամյակներին արևելագիտության առաջ քաշած տեսակետների համատեքստում: Գ. Ամասյանի հավաստմամբ՝ «Չելեբի (چلبی)⁵»-ն ազնվականական գույն ունեցող մի մակդիր էր, որը հին ժամանակ Թուրքիայում տրվում էր սուլթանազուն իշխաններին և բառացի նշանակում էր «աստվածաշուք», «դիցաշուք», թուրքերեն

¹ Տես Մ. արք. Օրմանեան, նշվ. աշխ., էջ 2981-2892, 3029-3030: Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, Երևան, 1959, էջ 222: Յ. վրդ. Պատիկեան, Հայաստանի հին քարտեզ մը, ժե դարերու վանքերն ու սրբավայրերը, «Բազմավեպ», 2000, թիւ 1-4, էջ 297:

² Ներկայացնում ենք Եղիազարին ուղղված Երեմիա Չելեպիի մամակները՝ [Առ Եղիազար կաթողիկոս յերուսաղէմ, վասն մահուան Ապրոյի], [Երեմիայէ առ Եղիազար կաթողիկոս ի Պրուսա], [Առ Եղիազար կաթողիկոս յորժամ գնաց ի Սուրբ Աթոռն Էջմիածին գահակալեալ նստաւ Կաթողիկոս Ամենայն Հայոց թլիմ ՌՅ[ԼԱ]], [Առ Եղիազար (յէջմիածին) վասն Շաթր իրիցու որոյոյ մահուն], [Առ Եղիազար կաթողիկոս յէջմիածին], [Առ Եղիազար կաթողիկոս յէջմիածին] (տես Յաւելուած, համապատասխանաբար՝ էջ 408-412, 412-429, 435-437, 438-442, 442-443, 443-445):

³ 1685 թ. Երեմիա Քյոմուրճյանը որդուն՝ Գրիգորիսին, տեսնելու նպատակով մեկնում է Էջմիածին և, ըստ էության, հանդիպում նաև Ջաքարիա Քանաքեռցուն: Էջմիածին կատարած այցելության վերաբերյալ տեղեկություններ է պահպանել 1497 թվականին Աղթամարում ընդօրինակված Ավետարանի հետագայի հիշատակարանը (1686 թ.). «345ա. ... յիշեցէք և զԲիւզանդացի պարոն Երեմիայ գիտնականն և զորդի նորա՝ զՄաղաքիա պատանի, զկարիչ պատկերաց և զոսկածաղիկ արարող, որք են բուն բարեկամ ինձ՝ թշուառացեալ Ջաքարէիս» (Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հատոր Ա, կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Ջեյթունյան, Փ. Անթաթյան, Երևան, 1984, էջ 644-646: Հմմտ. Դ. Ալիշան, Այրարատ, Վեճեսիկ, 1890, էջ 174, 180):

⁴ Մտերիմ է եղել Անտոն Չելեպիի հետ (տես Օրագրութիւն, էջ 32): Քյոմուրճյանը վկայում է. «[1657] Եւ մանզուլ արարին (պաշտոնանկ արեցին-Գ.Ա.) զմեր էֆենտին ի Սարայ» (նույնը, էջ 266): Պարզ չէ, թե ում մասին է խոսքը, սակայն նախընթաց շարադրանքից էլ կարելի է ենթադրել, որ այս թուրք պաշտոնյայի հետ Քյոմուրճյանն առավել քան սերտ կապեր է ունեցել: Երեմիան համագործակցել է նաև բոլոմիացի ազնվական և դիվանագիտական պաշտոնյա Լուդովիկո (Լուիջի) Ֆերդինանտո Մարսիլի (1658-1730) հետ՝ վերջինիս պատվերով հեղինակելով «Աշխարհագրութիւն» կամ «Հայաստանեայց եկեղեցւոյ քարտեզ» գործը:

⁵ Արաբերեն տառադարձությունը՝ Սիիրան Սինասյանի:

չելեր () «դիրք» բառից»¹: Վաստակաշատ հայագետը չելեպիներին դիտարկում է իբրև առանձին հասարակախավ՝ վերագրելով նրանց հստակ գործառույթներ և ունեցվածքի պատկառելի բաժին, որը մեծապես պայմանավորում էր հասարակական-քաղաքական հարաբերություններում նրանց ազդեցությունն ու գործունեությունը: Ավելին, նա չելեպիներին հակադրում է մեկ այլ հասարակախավի՝ խոջայությանը՝ որպես ավելի առաջադեմ ու ժողովրդական մի հանրույթի՝ ի տարբերություն իրենց նախապատիվ դիրքերում մնալու ձգտող չելեպիների պահպանուական նկրտումների²: Կարծում ենք, որ մեծանուն գիտնականի այս եզրահանգումները դույզն-ինչ չափազանցված են. հարցը նա քննության է առնում գլխավորապես XVII-XVIII դարերի պոլսահայ իրականության տարբեր խմբումները հիմք ունենալով, սակայն պիտի ասել, որ այն փաստարկները, որ նա բերում է հոգուտ չելեպիների կամ խոջաների, ավելի շուտ հետևանք են իր վերագրումների³: Բառի ծագումնաբանության «աստուածային»⁴ տեսակետն է առաջ քաշում նաև Գ. Մրմրյանը⁵: «Աստվածային» հիմքից զատ⁶ բառի ծագումնաբանության վերաբերյալ առաջ են քաշվել այլ տեսակետներ

¹ Տես Զ. Անասյան, XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Երևան, 1961, էջ 59:

² Նույնը, էջ 58-71:

³ Նրա հիմնական կովաններից է Կ. Պոլսում ծայր առած «ներսեցի և դրսեցի»-ների պայքարը, որտեղ, Զ. Անասյանի դերաբաժանմամբ, չելեպիները «ներսեցի»-ներն էին, խոջաները՝ «դրսեցի»-ներ: Տարիներ շարունակ պոլսահայ կյանքն ակբեկած այս պայքարը, իհարկե, անհնար է զանց առնել, սակայն մենք համակարծիք չենք չելեպիներին և խոջաներին հակընդդեմ բանակների բաժանելու և, ըստ դրա, այս կամ այն կողմին ազատագրական հավակնություններ վերապահելու Զ. Անասյանի տեսակետին: Պահպանված մատենագրական վկայությունները, մեր կարծիքով, ավելի քան համոզիչ են տարբեր առիթներով խոջաների և չելեպիների միջև եղած համագործակցությունը կասկածի տակ չառնելու համար: Այսպես, ակնհայտ է Ապրո Չելեպիի սերտ կապը խոջաներ Կարապետի և Ադամի հետ (տես Դիւան Սուրբ Յակոբայ. Ապրո Չելեպուն թեմատուզներն են այս փոլիցայ, «Սիոն», Երուսաղեմ, 1940, թիւ 12, էջ 315): Նույնպիսի փոխհամաձայնություն ենք տեսնում Ապրոյի, Խոջա Սահակի, Աստվածատուր Չելեպիի միջև (տես նույնը, էջ 315-316): Կ. Պոլսում մեկնեկու «եղբայր սիրելի» են կոչում խոջա Բաղդասարն ու Ապրո Չելեպին (տես նույնը, թիւ 7-8, էջ 202-203): Համոզիչ չէ նաև Զ. Անասյանի այն պնդումը, որ չելեպիները «ներսեցի»-ներն էին, այսինքն՝ բնիկ պոլսահայերը կամ մայրաքաղաքի մերձակայքից սերողները. Անտոն Չելեպիի մասին Մ. Չամչյանը վկայում է, որ էր նա «բնիկ ի Պրուսայու (Բուրսա-Գ.Ա.)», նույն հանրահռչակ Ապրո Չելեպին իր գործունեությունը ծավալում էր Սերբիայում, ավելի ստույգ՝ Բելգրադում, իսկ ոչ հեռավոր մախնիներն այստեղ էին եկել Անիից: Եթե նույնիսկ դիտարկենք, որ չելեպիները ազդեցության ոլորտներին տիրապետում էին Օսմանյան կայսրության արևմտյան մասում, իսկ խոջաները արևելյան հատվածի ծնունդ էին, սխալ կլինենք, քանի որ «Ձամբռ»-ը հիշատակում է Աղթամար կղզու իշխան Աբդուլլա Չելեպիին (տես Սիմեոն կաթողիկոս, Ձամբռ, Վաղարշապատ, 1873, էջ 94), նույն Կ. Պոլսում և նրա մերձակայքում ևս բազմիցս հիշատակված են խոջաների գործունեության տարատեսակ դրսևորումներ, ուստի կարծում ենք՝ աշխարհագրական բաժանումներն այս դեպքում արհեստական կլինեն: Չելեպիները և խոջաները շատ հաճախ եղել են նաև ազգականներ:

⁴ Տես Գ. Մրմրեան, Ստուերք հին դէմքերու, Կ. Պոլիս, 1907, էջ 7:

⁵ Իր մեկ այլ աշխատության մեջ այս առնչությամբ Գ. Մրմրյանը գրում է. «Իսքէնտերի Չելեպի մակդիրը կենթադրէ արդէն իր վրայ բաւական ֆրանկութիւն՝ ժամանակին բացորոշ ու բացորոշող բառովը» (Գ. Մրմրեան, Մասնական պատմութիւն հայ մեծատուններու, էջ 25): Մեզ անհասկանալի է մնում նրա այս որակումը:

⁶ «Չելեպի»-ն աստված իմաստն ունի Փոքր Ասիայում՝ յուրյուքների մոտ և գրավոր խոսքում «չալաք» բառն առաջին անգամ հիշատակվում է XIV դարում փոքրասիական վկայություններում (ըստ Կ. Ֆոյի,

V, , 1968, : Հակառակ բոլոր փնտրտուքների՝ մեզ այդպես էլ չհաջողվեց հարցին վերաբերող

նույնպես¹, որոնք իրենց հերթին հետաքրքիր մեկնարկ են դառնում վերջինիս ունեցած գործառնության-կիրառական իմաստն ավելի լավ պատկերացնելու համար: «Չելեպի»-ն սկզբնաղբյուրներում հիշատակված է որպես պատվանուն, որը կրում էին արքայազները, իշխանները, բարձրաստիճան հոգևորականները, գրողները, գիտնականները և այլք,² և սկսած XVI դարից՝ համարժեք է եղել իսպաներեն «don» և ֆրանսերեն «monsieur» տիտղոսներին:

Անդառնալիորեն կորստահար Երեմիա Քյոնուրճյանը զավակների մահից հետո, կյանքից կարծես թե երես թեքելով՝ իր վերջին տարիներն ապրում է մեկուսի և փորձում վիշտը փարատել ստեղծագործական փնտրտուքներում: Վախճանվել է 1695 թ. հուլիսի 15-ին՝ հայ մտքի պատմության մեջ դրոշմելով իր հարամնա անունը:

բոլոր ուսումնասիրություններից օգտվել անմիջականորեն, ուստի փակագծերում կնշենք միայն տեսակետն առաջ քաշած հեղինակի անունը: Չշեղվելու համար քննարկվող նյութից՝ այստեղ հարցին կանոնադառնա՞նք ընդհանուր գծերով՝ հայ մատենագրական տվյալների համատեքստում չելեպիների և խոջաների առնչակցության ու ծավալած գործունեության համազանա՞նալի մեկնաբանումը թողնելով մեկ այլ առիթով: Բառը ներկայացվել է նաև սուֆիստական «սիրելի, սիրեցյալ» իմաստով, որը նորից նշանակում է «աստված» (հաղորդում է Կ. Չալեմանը), նույն տեղում: «Չելեպի»-ի բառի արմատները քրդերենում է փնտրում Ն. Մառը. նրա կարծիքով՝ այն ունեցել է նախնական «չելեբ-աստված» իմաստը, այստեղից էլ՝ «չելեպի-ազնվայր», նաև «թափառական երգիչ» նշանակությունը (տես նույնը, էջ 614):

¹ Մեծ համարում ունի այն կարծիքը, որ դեռևս Չինգիզ խանի (1206-1227) օրոք թաթարներն ու արևելյան թուրքերը գրչությանը ծանոթացան քրիստոնյա վանականների շնորհիվ, ուստի ի շարս Աստծո անունների՝ ընդգրկեցին նաև արաբ. بيلد բառը, որը նշանակում է «խաչ», իսկ դրանից ելնելով՝ «չելեպի»՝ խաչին խոնարհվող, կիրառության մեջ է մտել որպես գրին տիրապետող, ուսյալ մարդ (ըստ Ահմեդ Վեֆիկ փաշայի), տես նույնը, էջ 612): Ջարգացնելով այս տեսակետը՝ հետագայում առաջ է քաշվել այն կարծիքը, որ «չելեբ» և «չելեբի» բառերը կրում են նեստորականների միսիոներական գործունեության հետքերը և արևմուտք են փոխադրվել սելջուկների միջոցով Միջին Ասիայից, հետևաբար, թվագրվում են XIII դարից էլ առաջ (ըստ Վ. Ռոզենի), տես նույնը, էջ 613): Մեկ այլ տեսակետի համաձայն՝ «չելեպի»-ն պետք է բխեցնել արաբ. كَلْبَة բերել, ներմուծել բառից (այստեղից էլ՝ առաջ է գալիս «ներմուծված ապրանք», «ստրուկ» իմաստը), և «չելեպի»-ներին՝ որպես գրչությանը քաջածանոթ անձանց, պետք է համեմատել դեռևս մամլուքների օրոք Եգիպտոսում հայտնի «ջալաբ»-ների հետ, որոնք հանդես էին գալիս առանձին գնդով, հմուտ էին արվեստների, գրի ու գրականության հարցերում և հաճախ նշանակվում էին պատասխանատու պաշտոններում (ըստ Վ. Տիգենհաուզենի), տես . . . , նշվ. աշխ., էջ 613): «չելեպի» և «ջալաբ» բառերի միջև ոչ մի ընդհանրություն չի տեսնում Վ. Սմիրնովը, նրա պնդմամբ՝ «չելեպի»-ն ծագել է հուն. kalliephos «զեղեցիկ խոսող, երգող և գրող» բառից, որտեղից էլ բյուզանդական հույների կողմից կիրառվել է «հարգարժան և կրթյալ պարոն» իմաստով (տես նույն տեղում): Բառը ստուգաբանվել է նաև որպես «իմ պարոն», «գրող», «ընթերցող», «իմացող», «բնական խելքով օժտված»:

² Դ. Անասյանը հայ չելեպիների մեջ առանձնացնում է մի խումբ, որոնց նա կոչում է «նոր չելեբիներ»: Սրանք հայտնի խոջաների զավակներ էին, որոնք, ըստ գիտնականի, նույն վաճառական խոջաներն էին, պարզապես այս տիտղոսը նրանց համար սոսկ «գրավչություն» էր (տես Դ. Անասյան, XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, էջ 67): Կաշառատվության հաստատուն ավանդույթներ ունեցող Օսմանյան կայսրության մեջ չենք բացառում, որ լինեին դեպքեր, երբ փառասիրությունից ելնելով՝ գնվեին տիտղոսներ, սակայն Երեմիա Չելեպիի և մի շարք ուրիշ հայ չելեպիների օրինակով կարող ենք պնդել, որ ազգությամբ հայ չելեպիներից շատերին նույնպես հատուկ են եղել տիտղոսին վայել գրագիտությունն ու ազնվականությունը:

Գայանե Այվազյան, Երեմիա Չելեպի Բյոմուրձյանի կյանքը – Հոդվածը նվիրված է XVII դարի նշանավոր գործիչներից Երեմիա Բյոմուրձյանի (1637-1695) գործունեությանը, որ մեծապես աղերսվում է դարակեսին Կ. Պոլսի հայ գաղթավայրում ծավալված հասարակական-քաղաքական անցքերին: Արդեն հայտնի տվյալների ընդհանրական անդրադարձի համատեքստում աղբյուրագիտական տվյալների հիման վրա ներկայացված են նրա կենսագրության այն դրվագները, որ նորովի են լուսաբանում հարցը:

Гаянэ Айвазян, Жизнь Еремии Челеби Кемурчяна – Статья посвящена деятельности одного из выдающихся деятелей XVII века Еремии Кемурчяна (1637-1695), которая главным образом соприкасается с социально-политическими событиями развивающимися в середине века в армянской колонии Константинополя. В контексте обращения к уже известным данным и на основе источниковедческих данных представлены те эпизоды его биографии, которые по новому освещают вопрос.

Gayane Aivazyan, The life of Yeremia Chelebi Qyomurchyan – The article is devoted to the activity of one of the outstanding figures of the XVII century Yeremia Qyomurchyan (1637-1695), which is mainly in contact with the socio-political events developing in mid-century in Armenian colony of Constantinople. The article presents the episodes of his biography, which spread new light on the question in the context of the already known data and on the basis of source data.

*Գայանե Այվազյան – ԵՊՀ պատմության ֆակուլտետի
հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ*

